ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՄԻՔԱՅԵԼ ԳԱԳԻԿԻ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք՝ սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2026

Межгосударственная образовательная огранизация высшего образования «Российско-армянский университет»
МИКАЕЛ МЕЛКУМЯН ГАГИКОВИЧ

АКТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ КОМПЕНСАЦИИ ВРЕДА, ПРИЧИНЕННОГО АДМИНИСТРИРОВАНИЕМ

АВТОРЕФЕРАТ

Диссертация на соискание ученой степени кандидата

юридических наук по специальности

12.00.02. – «Публичное право –конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление»

ЕРЕВАН 2026

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գևորգ Բալաբեկի Դանիելյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Աշոտ Հայկի Խաչատրյան**

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Տիգրան Աշոտի Խաչիկյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Հայաստանի Եվրոպական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի հուլիսի 2-ին՝ ժամը 15:00-ին, Ռուս-Հայկական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք.Երևան, Հովսեփ Էմին 123): Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գիտական աշխատողների գրադարանում:
Սեղմագիրն առաքվել է 2026 թվականի հունիսի 1-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
Իրավաբանական գիտությունների թեկնածու **Ջ.Հ.Հայրապետյան**

Тема диссертации утверждена на Ученом совете Академии государственного управления РА

Научный руководитель: доктор юридических наук, профессор **Геворг Балабекович Даниелян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **Ашот Гайкович Хачатрян**

кандидат юридических наук, доцент **Тигран Ашотович Хачикян**

Ведущая организация: **Европейский университет Армении**

Защита состоится 2-го июля 2026 г. в 15:00 часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции Комитета по высшему образованию и науке РА, действующего при Российско-Армянском университете (0051, г. Ереван, ул. Овсепа Эмина 123). С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Российско-Армянского университета. Автореферат разослан 1-го июня 2026г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук **Дж.А.Айрапетян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Վնասի հատուցման ինստիտուտն առանցքային նշանակություն ունի անձի իրավունքների պաշտպանության բնագավառում: Դրա նախադրյալներն արտացոլվել են դեռևս հին հռոմեական իրավունքում և զարգացման տևական ուղի են անցել: Վնասի հատուցման իրավունքի կարևորությունն ընդգծվում է մասնավորապես հանրային իրավական աղբյուրներում, մասնավորապես Սահմանադրության մեջ, որով մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները հարգելն ու պաշտպանելը դիտվել են որպես հանրային իշխանության պարտականություններ (3-րդ հոդվածի 2-րդ մաս), իսկ վնասի հատուցման իրավունքը ներառվել է հիմնական իրավունքների կազմում (62-րդ հոդված): Վերոնշյալ սահմանադրաիրավական նորմերից հետևում է, որ պետության առաջնահերթ պարտավորություններից է մարդու հիմնական իրավունքների և ազատությունների, այդ թվում՝ վնասի հատուցման իրավունքի պաշտպանությունը: Վարչական մարմինների կողմից անձանց խախտված իրավունքների վերականգնումը իրավական պետության գլխավոր խնդիրներից է: Հատկանշական է, որ վնասի հատուցման իրավունքը սահմանող սահմանադրական նորմը վերաբերում է միայն հանրային իրավունքի բնագավառում իշխանական լիազորություններով օժտված մարմինների կողմից պատճառված վնասին, որով և ընդգծվում է վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման կարևորությունը:

Պաշտոնատար անձանց գործողություններից տուժած անձանց իրավունքների պաշտպանությունը կարևորվել է նաև միջազգային իրավունքում: Մասնավորապես, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով ամրագրվել է պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք: Նման ձևակերպմամբ նույնպես ընդգծվել է ի պաշտոնե գործող անձանց կողմից անձի խախտված իրավունքները վերականգնելուն ուղղված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ ներդնելու՝ անդամ պետության պոզիտիվ պարտականությունը:

Այս համատեքստում ընդգծվում է վնաս պատճառող սուբյեկտը, որն օժտված է պետաիշխանական լիազորություններով: Նրա կողմից պատճառված վնասի հատուցման հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը պետք է կարգավորվի այն աստիճան հստակությամբ, որ հնարավորինս բացառվեն անձի իրավունքների վերականգնման գործընթացում իշխանական լիազորություններով օժտված մարմինների և պաշտոնյաների հնարավոր կամայականությունները: Սույն հետազոտության արդիականությունը թելադրված է ոչ միայն այդ երևույթի մտահոգությամբ, այլև այն հաղթահարելու օբյեկտիվ անհրաժեշտությամբ, ինչը կարող է երաշխավորվել միայն համարժեք տեսական ուսմունքի մշակվածության պարագայում:

Վարչական մարմինների գործողություններով կամ անգործությամբ պատճառված վնասի հատուցման իրավունքի իրացումը երաշխավորող լիարժեք օրենսդրական կարգավորումների անհրաժեշտությունը դարձել է հրատապ խնդիր՝ հաշվի առնելով այդ բնագավառում ծագող վեճերի ավելացման միտումները, ինչպես նաև այն, որ, այդ ծանրաբեռնվածությամբ պայմանավորված, վարչական մարմինների կողմից իրենց վերապահված լիազորությունների իրականացումն ինքնին կարող է միջամտել անձի որոշակի իրավունքներին՝ անձի համար առաջացնելով որոշակի անբարենպաստ հետևանքներ: Ըստ այդմ՝ սույն հետազոտության արդիականությունը պայմանավորված է նաև անհարկի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու հնարավոր ուղիների համալիր ուսումնասիրության և վարչարարությունը բարելավելու գործուն միջոցներ առաջադրելու անհրաժեշտությամբ:

Վարչարարությամբ պատճառված վնասի հատուցմանը վերաբերող ներպետական գործող օրենսդրության ուսումնասիրությունից ևս հետևում է թեմայի արդիականությունը, մասնավորապես.

- տվյալ հասարակական հարաբերություններն ամբողջությամբ կարգավորված չեն հանրային իրավունքի նորմերով, ինչն արձանագրվել է նաև Սահմանադրական դատարանի որոշումներով,

- ամբողջ ծավալով չի երաշխավորում յուրաքանչյուր խախտված իրավունքի վերականգնման հնարավորությունը,

- պատշաճ և լիարժեք կարգավորված չէ ոչ նյութական իրավունքների պաշտպանությունը, ինչպես նաև արդարացված չեն որոշ դեպքերում այդ իրավունքների խախտման արդյունքում վնասի հատուցման առավելագույն սահմանների օրենսդրական հիմքերը,

- բացակայում են իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման սպառիչ սկզբունքները և չափանիշները:

Խնդրահարույց է նաև ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունքի պաշտպանության ընթացակարգային կարգավորումների արդյունավետությունը: Մասնավորապես, տվյալ իրավունքի վերականգնման համար օրենսդրությամբ սահմանվել է բավական բարդ ընթացակարգ, որը ենթադրում է մեկից ավելի վարչարարությունների իրականացման, վնաս կրած սուբյեկտի կողմից լրացուցիչ ապացույցների հավաքագրման, վնասի հատուցման եղանակների գնահատման և ընտրության անհրաժեշտություն: Առկա կարգավորումները կարելի է թերի համարել նաև այն առումով, որ դրանք չեն նախատեսում վնաս պատճառած վարչական մարմնի կողմից սեփական նախաձեռնությամբ վնասի հատուցում տրամադրելու հնարավորություն:

Վերը նշված, ինչպես նաև ատենախոսության մեջ բարձրացված բազմաթիվ այլ հարցերի արդյունավետ լուծմանն ուղղված առաջարկների ներկայացման անհրաժեշտությունը պայմանավորում է սույն հետազոտության արդիականությունը:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը: Հանրային իշխանության իրականացմամբ պատճառված վնասի հատուցմանն առնչվող էական խնդիրներն ուսումնասիրվել են առանձին հեղինակների կողմից: Այս հարցերի վերաբերյալ հրապարակված աշխատությունների շարքում որոշակի թիվ են կազմում նաև ատենախոսությունները: Պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության հետ կապված հարցերի հետազոտմանն ուղղված աշխատություններից կարելի է հիշատակել Գ. Դանիելյանի, Ն. Այվազյանի, Վ. Պողոսյանի, Հր. Թովմասյանի, Ռ. Եղյանի, Ս. Ս. Ալեքսեևի, Կ. Բ. Յառոշենկոյի, Ա. Ա. Պոդոպրիգոռայի, Ա. Լ. Մակովսկու, Ե. Պ. Չեռնովոլի և այլոց աշխատությունները: Սակայն հարկ է նկատել,

որ, չնայած վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման ինստիտուտի վերաբերյալ ռուսական աղբյուրներում առկա տեսական մշակումներին, հայրենական իրավաբանական գրականության մեջ սակավ են խնդրո առարկա թեմայի համակողմանի ուսումնասիրությունները:

Հետազոտության օբյեկտը: Հետազոտության օբյեկտ են հանդիսանում վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի իրավունքից բխող նյութաիրավական և դատավարական հարաբերությունները:

Հետազոտության առարկան: Հետազոտության առարկա են հանդիսանում վարչարարությամբ պատճառված վնասի հատուցմանը վերաբերող նյութական և դատավարական նորմերը, ինչպես նաև դրանց կիրառման պրակտիկան, մասնավորապես՝ միջազգային պայմանագրերով, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, ինչպես նաև դրանով սահմանված իրավունքների և խախտված իրավունքների վերականգնման վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումները, Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները, տարբեր երկրներում քննարկվող հարցերի վերաբերյալ կարգավորումները և դատական պրակտիկան:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը վարչարարությամբ պատճառված վնասի հատուցումը կարգավորող իրավանորմերի և պրակտիկայի կատարելագործման, գործող օրենսդրությունը միջազգային պայմանագրերով նախատեսված չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով համապատասխան առաջարկների մշակումն է: Այդ նպատակի իրագործումը պահանջում է հետևյալ խնդիրների լուծումը.

1) հստակեցնել պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավական հիմքերը,

2) սահմանել իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պայմանները,

3) սպառիչ կանոնակարգել պատճառված ոչ նյութական վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները,

4) վեր հանել խախտված իրավունքների ողջ ծավալով վերականգնման հնարավոր խոչընդոտները և առաջարկել այդ խոչընդոտների վերացմանն ուղղված լուծումներ,

5) առանձնացնել վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման ընթացակարգին, նյութական և դատավարական կողմերին առնչվող տեսական և գործնական հիմնախնդիրները և առաջարկել դրանց լուծման տարբերակներ:

Հետազոտության տեսական հիմքը: Հետազոտության համար որպես տեսական հիմք են ընդունվել վարչարարությամբ պատճառված վնասի հատուցմանն առնչվող առանձին հարցերի վերաբերյալ հայրենական և արտասահմանյան տարբեր հեղինակների աշխատությունները: Այդ հեղինակներից են Գ. Դանիելյանը, Ն. Այվազյանը, Ռ. Եղյանը, Հր. Թովմասյանը, Վ. Պողոսյանը, Գր. Մուրադյանը, Գ. Մուղնեցյանը, Տ. Բարսեղյանը, Ն. Ռ. Սկոբիչկինան, Օ. Վ. Միխայլենկոն, Ա. Լ. Բուրկովը, Ս. Վ. Նիկիտինը և ուրիշներ:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը: Հետազոտության փուլում ուսումնասիրվել և վերլուծվել են հայրենական և արտասահմանյան երկրների պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերը: Բացի այդ, հետազոտվել են թեմային առնչվող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները, Սահմանադրական դատարանի որոշումները, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի և մյուս դատական ատյանների դատական ակտերը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության ընթացքում կիրառվել են ինչպես ընդհանուր գիտական մեթոդներ՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի, սինթեզի և այլն, այնպես էլ մասնավոր գիտական մեթոդներ՝ իրավահամեմատական, համակարգակառուցվածքային և այլն:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է պաշտպանության ներկայացվող դրույթներում,

ատենախոսության եզրակացության մեջ հեղինակի կատարած տեսական ընդհանրացումներում և գիտագործնական բնույթի առաջարկություններում:

Պաշտպանության ներկայացվող դրույթներ

1. Իրավագետների դիրքորոշումներում, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում գերակշռում է այն մոտեցումը, որ գործարար համբավին պատճառված վնասի հատուցումը դրսևորվում է միայն կրած նյութական վնասների հատուցմամբ, իսկ ոչ նյութական վնաս պատճառելը հնարավոր է համարվել միայն ֆիզիկական անձանց մասով: Խնդրահարույց դիտելով այս դիրքորոշումը՝ կարծում ենք, որ վնասի հատուցման բուն էությունը թելադրում է, որ յուրաքանչյուր իրավունք, այդ թվում՝ իրավաբանական անձանց ոչ նյութական իրավունքները, ենթակա են առանձին պաշտպանության: Այն դեպքերում, երբ ոչ իրավաչափ միջամտությունը տեղի է ունենում անձի մի քանի իրավունքների նկատմամբ, վերականգնման ենթակա է դրանցից յուրաքանչյուրը (ինչպես նյութականը, այնպես էլ ոչ նյութականն առանձին վերցրած): Այս համատեքստում կարևորվում է նաև իրավաբանական անձանց ոչ նյութական վնասի հատուցման համարժեք կառուցակարգերի ներդրման անհրաժեշտությունը:

2. Գործող օրենսդրությունը որոշ դեպքերում նախատեսում է առողջությանը պատճառված վնասի հատուցման առավելագույն չափ, մասնավորապես՝ մասնագիտական աշխատունակության մասնակի կորստի դեպքում հատուցման ենթակա գումարը չի կարող գերազանցել վերջին մեկ տարվա աշխատավարձի 70 տոկոսը: Այսպիսի կարգավորումն առավել բնորոշ է զուտ սոցիալական երաշխիքներին և հանրային պատասխանատվության առավելագույն չափեր սահմանելու քաղաքականությանը, երբ, օրինակ, տուգանքի առավելագույն չափերը հարկ է որոշակիացնել, բայց ոչ պատճառված վնասի համարժեք հատուցման սկզբունքով: Վերջին հաշվով, հատուցման ենթակա գումարի առավելագույն չափի սահմանափակումը կարող է խաթարել անձի խախտված իրավունքների ողջ ծավալով վերականգնման հնարավորությունը, քանի որ վնասի չափի որոշման հարցում կարող են ազդեցություն ունենալ մի շարք գործոններ, որոնց հաշվառմամբ արդարացի հատուցումը կարող է գերազանցել գործող օրենքով սահմանված առավելագույն չափը: Հետևապես, առավել հիմնավորված ենք համարում հիշյալ

հարցում օրենսդրորեն հատուցման առավելագույն սահմանաչափ ամրագրելուց զերծ մնալը:

3. Ներպետական օրենսդրությունը նախատեսում է միայն անձի մահվան դեպքում վնասի հատուցման հնարավորություն, մինչդեռ սահմանադրահիրավական հիմնադրույթների համակարգված վերլուծությունից բխում է, որ պետությունը պատասխանատվություն է կրում նաև իր իրավասության ներքո գտնվող անձանց կյանքը պաշտպանելու նպատակով անհրաժեշտ միջոցներ չձեռնարկելու համար, իսկ կյանքի իրավունքը ենթակա է պաշտպանության ոչ միայն տուժողի մահվան, այլ նաև այն դեպքերում, երբ անձի կյանքը ենթարկվել է իրական և լուրջ վտանգի (նաև կյանքի համար լուրջ վտանգ ներկայացնող վնասվածքների դեպքում): Ըստ այդմ էլ կարծում ենք, որ գործող կարգավորումներում հարկ է պաշտպանության արժանացնել կյանքի իրավունքը, իսկ հատուցում սահմանել ոչ թե անձի մահվան, այլ կյանքի իրավունքի նկատմամբ ոտնձգության կամ միջամտության դեպքերի համար: Մեր այս դիրքորոշումն առավել համահունչ է նաև ՄԻԵԴ-ի կողմից առաջադրված համապատասխան դիրքորոշումներին, որոնց անդրադարձել ենք տեքստում:

4. Ատենախոսության մեջ հիմնավորվել է պետական մարմինների իրավաչափ գործողություններով պատճառված վնասի հատուցման ինստիտուտի բարելավման անհրաժեշտությունը: Մասնավորապես, գործող օրենսդրությունը խիստ սահմանափակ դեպքերում է նախատեսում վարչական մարմինների իրավաչափ գործողությունների հետևանքով վնասի հատուցման դեպքերը (օրինակ՝ «Ահաբեկչության դեմ պայքարի մասին», «Հրդեհային անվտանգության մասին» օրենքներով): Մինչդեռ գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ առավել մեծ վտանգը կանխելու նպատակով վարչական մարմիններն իրենց լիազորությունների իրավաչափ իրականացման արդյունքում վնաս պատճառեն այնպիսի անձանց իրավունքներին, որոնք կապված չեն այդ վտանգի առաջացման հետ: Հետևապես, հաշվի առնելով քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը, արդիական է թվում օրենսդրական մակարդակով իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման համարժեք նախապայմաններ սահմանելը: Նման կառուցակարգերի

սահմանման օրինակ կարող է ծառայել քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված՝ ծայրահեղ անհրաժեշտության վիճակում վնաս պատճառելու ինստիտուտը: Միաժամանակ, մեր եզրահանգումն առավել համահունչ է դատարանների ողջամիտ հայեցողության սկզբունքին:

5. Գործող օրենսդրությամբ տարբերակվել են վնասի հատուցման եղանակները, ընդ որում, վնասի հատուցման համապատասխան եղանակի որոշումը ենթադրում է որոշակի պայմանների (փաստական հանգամանքների) բացահայտում և գնահատում: Իրավակիրառ պրակտիկան ընթացել է այն ուղղությամբ, որ, տեսական և օրենսդրական լիարժեք հիմքերի բացակայությամբ պայմանավորված, ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջը մերժվում է վնասի հատուցման անհիմն եղանակ հայցելու արդյունքում, ինչը չի կարող հիմնավորված համարվել իրավունքների վերականգնման հարցում: Հետևապես, ատենախոսությունում առաջադրվել են եզրահանգումներ, ըստ որոնց՝ վնաս կրած սուբյեկտը բավարարվում է միայն վնասի հատուցման պահանջ ներկայացնելով, իսկ վնասի հատուցման եղանակների ընտրությունը, ըստ այդմ՝ նախկին դրության վերականգնման հնարավորությունը կամ արդյունավետությունը, դրան համարժեք այլ դրության վերականգնման հնարավորությունը, բավարարությունը կամ ավելի մեծ ծախսերի կատարման անհրաժեշտությունը օրենսդրական հստակ հիմքերի պարագայում գնահատվում են վարչական մարմնի կողմից:

6. Գործող իրավական հիմքերով բողոքարկմանը զուգահեռ չի կարող ներկայացվել վնասի հատուցման պահանջ (այն ենթադրում է սոսկ առանձին վարչարարության իրականացում): Մինչդեռ, մեր կարծիքով, վարչարարության իրավաչափության ստուգման պահանջի հետ միասին իրավունքների վերականգնման, այդ թվում՝ վնասի հատուցման պահանջի ներկայացման հնարավորության և այդ պահանջների լուծման կառուցակարգերի օրենսդրական սահմանումն առավել հիմնավորված և արդյունավետ կդարձնի անձանց իրավունքների պաշտպանությունը, ինչպես նաև կապահովի վարչական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր ներդնելու, գործերը ողջամիտ ժամկետում

քննելու՝ միջազգային պայմանագրով ստանձնած պետության պոզիտիվ պարտականությունների կատարումը: Փոխկապակցված պահանջների համադրումը համահունչ է նաև արդար դատաքննության իրավունքի՝ արդարադատության մատչելիության տարրին:

Այս եզրահանգումը թելադրված է նաև հանրային իրավունքի մյուս ճյուղերում, օրինակ՝ քրեական դատավարությունում արդեն իսկ ավանդաբար ձևավորված կարգավորումները հնարավորինս միասնական դարձնելու օբյեկտիվ անհրաժեշտությամբ:

7. Ներկայումս գործող իրավակարգավորումները հանգում են նրան, որ վնասի հատուցման ընթացակարգերը ենթադրում են վնաս պատճառած վարչական մարմնի կողմից վարչական ակտի ընդունում: Հետևապես կարևորվում են նաև այդ վարչական ակտերի կատարման հիմնախնդիրները, որոնք կապված են ակտն անբողոքարկելի դառնալու և կատարվելու, ըստ էության, օրենսդրական թերի կարգավորումների հետ: Այսպես, գործող օրենսդրությունը վարչական ակտն անբողոքարկելի դառնալը պայմանավորել է միայն վարչական կարգով բողոքարկման հետ, մինչդեռ, մեր կարծիքով, սահմանված այդ իրավակարգավորումը վերանայման կարիք ունի, քանի որ վարչական ակտերը կարող են բողոքարկվել ինչպես վարչական, այնպես էլ դատական կարգով: Բացի այդ, օրենսդրությամբ սահմանված չէ նաև վարչական կամ դատական կարգով բողոքարկվելու դեպքում վարչական ակտի անբողոքարկելի դառնալու պահը, ինչը նույնպես ունի կանոնակարգման անհրաժեշտություն:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության նշանակությունը առաջին հերթին այն է, որ ատենախոսությունը վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման ինստիտուտը կազմող իրավական նորմերի և միջազգային փորձի համակարգային ուսումնասիրմանն ուղղված աշխատանք է, որտեղ փորձ է արված վեր հանելու նաև գիտագործնական բնույթի խնդիրներ և ներկայացնելու եզրակացություններ և առաջարկներ՝ դրանք հաղթահարելու նպատակով: Դրանով պայմանավորված՝ աշխատությունն ունի գործնական նշանակություն ինչպես օրենսդրական կարգավորումների նախատեսման և փոփոխման, այնպես էլ վարչարարությամբ պատճառված վնասի

հատուցման հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավանորմերի կիրառման պրակտիկայի կատարելագործման առումով: Բացի այդ, ատենախոսությունն ընդգրկում է տեսական բնույթի եզրահանգումներ, որոնք կարող են օգտագործվել այնպիսի դասընթացներում, որոնց դասավանդման առարկան առնչվում է վարչարարությանն ընդհանրապես և վարչարարությամբ պատճառված վնասի հատուցմանը՝ մասնավորապես:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում: Ատենախոսության հիմնական մասերի շարադրման ընթացքում մշտապես կապ է պահպանվել գիտական ղեկավարի, ինչպես նաև ամբիոնի ներկայացուցիչների հետ, և տարբեր առանցքային դրույթներ ատենախոսության մեջ ամրագրվել են նախապես համաձայնեցնելուց հետո: Ատենախոսության էությունն արտացոլող գաղափարներն արտահայտվել են գիտական հոդվածներում, որոնք տպագրվել են տարբեր գիտական ամսագրերում, իսկ առանձին թեզեր օգտագործվել են նաև առանձին գիտաժողովների կամ վերապատրաստումների ընթացքում հեղինակի կարդացած զեկույցներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլխից, դրանցում ընդգրկված 7 պարագրաֆից, եզրակացությունից, օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից, հավելվածից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված է ընտրված թեմայի արդիականությունը, ներկայացված են թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակը և խնդիրները, հետազոտության օբյեկտը և առարկան, հետազոտության աղբյուրագիտական և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, գործնական և տեսական նշանակությունը, ատենախոսության արդյունքների փորձարկումը և դրա կառուցվածքը, ձևակերպված են պաշտպանության ներկայացվող դրույթները:

«Վնասի հասկացության զարգացման արդի հիմնահարցերը և վնասի հատուցման նախապայմանները» վերտառությամբ ատենախոսության առաջին գլուխը բաղկացած է երկու պարագրաֆներից:

Առաջին գլխի՝ ««Վնաս» հասկացության որոշ արդի հիմնահարցեր» վերտառությամբ առաջին պարագրաֆում, նկարագրվել է տվյալ եզրույթի ձևավորման և զարգացման ուղին, համեմատական վերլուծության են ենթարկվել տվյալ հասկացության շուրջ տեսական գրականությունում տարբեր իրավագետների մոտեցումները, տարբերակվել և բացահայտվել են վնասի տեսակները, դրանց բաղադրատարրերը, վնասի չափի որոշման համար ուշադրության արժանի հանգամանքները, դրանք համադրվել են ներպետական կարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի հետ, ընդգծվել է «Վնաս» եզրույթի ճիշտ ընկալման անհրաժեշտությունը, այն հատուցման ինստիտուտի հիմնարար բաղադրիչն է՝ տվյալ իրավահարաբերությունների ծագման անփոխարինելի պայմանը: Ընդ որում, տվյալ հասկացության բացահայտումն ունի առանցքային նշանակություն վնասի հատուցման ինստիտուտն իրավունքների վերականգնմանն ուղղված այլ իրավահարաբերություններից տարանջատելու հարցում:

Առաջին գլխի՝ «Ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման նախապայմանները» վերտառությամբ երկրորդ պարագրաֆում ներկայացվել են հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարբերակման հիմքերը և պայմանները, դրանց կարևորությունն այն հաշվառմամբ, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կարող են վնաս պատճառել նաև մասնավոր իրավահարաբերություններում, բացահայտվել են ներպատական կարգավորումները և իրավակիրառ պրակտիկայում առաջացող խնդիրները, անդրադարձ է կատարվել վարչական մարմնի մեղքի հիմնահարցին, ինչպես նաև ներկայացվել են օրենսդրական բարեփոխումների առաջարկներ:

«Նյութական և ոչ նյութական վնասի հատուցման առանձնահատկությունները և հատուցման եղանակները» վերտառությամբ ատենախոսության երկրորդ գլուխը բաղկացած է երեք պարագրաֆներից:

Երկրորդ գլխի՝ «Գույքային վնասի հատուցման եղանակները անձի իրավունքների վերականգնման համատեքստում» վերտառությամբ առաջին պարագրաֆում, հեղինակը քննարկել է վնասի հատուցման եղանակները, բացահայտել դրանց որոշման պայմանները, վեր հանել օրենսդրական և պրակտիկ

խնդիրներ, ուսումնասիրել միջազգային փորձը և դրա հաշվառմամբ առաջարկել բացահայտված խնդիրների լուծման ուղիներ:

Երկրորդ գլխի՝ «Ոչ նյութական վնասի հատուցման առանձնահատկությունները» վերտառությամբ երկրորդ պարագրաֆում, հեղինակն ուսումնասիրել է իրավաբանական գրականության մեջ առկա տեսակետները, օրենսդրական կարգավորումներն ու իրավակիրառ պրակտիկան, դրանց համադրության արդյունքում կատարել է եզրահանգումներ առ այն, որ ոչ նյութական վնասը ներառում է ոչ միայն հոգեկան տառապանքները, այլ նաև ֆիզիկական ցավը և ոչ նյութական իրավունքների ու բարիքների նկատմամբ միջամտության արդյունքում վրա հասած բացասական հետևանքները: Բացի այդ, աշխատությունում ներկայացվել են հիմնավորումներ՝ ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտի հստակ կանոնակարգման անհրաժեշտության վերաբերյալ, վեր են հանվել ներպետական օրենսդրական կարգավորումների թերությունները և կատարվել դրանց վերացման համապատասխան առաջարկություններ:

Երկրորդ գլխի՝ «Անձի կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցման համակարգերի համեմատական վերլուծություն» վերտառությամբ երրորդ պարագրաֆում, հեղինակն ուսումնասիրել է եվրոպական տարբեր երկրներում կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցմանը վերաբերող փորձը, կատարել համեմատական վերլուծություններ, դրանք համադրել ներպետական օրենսդրության կարգավորումների հետ, ինչպես նաև ներկայացրել դրանից բխող, ներպետական օրենսդրության կատարելագործմանն ուղղված եզրահանգումներ՝ անձի իրավունքների առավել արդյունավետ պաշտպանության կառուցակարգեր ձևավորելու նպատակով:

«Իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի և վնասի հատուցման ներպետական կառուցակարգերի հիմնախնդիրները» վերտառությամբ ատենախոսության երրորդ գլուխը բաղկացած է երկու պարագրաֆներից:

Երրորդ գլխի՝ «Իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հիմնախնդիրները» վերտառությամբ առաջին պարագրաֆում բացահայտվել են նման տեսակի վնասի առանձնահատկությունները,

իրավաբանական գրականությունում առկա տեսակետները, հեղինակի կողմից կատարվել են ներպետական օրենսդրության ուսումնասիրություն, որի արդյունքում բացահայտվել են իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման խիստ սակավ դեպքեր: Կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում հեղինակը եկել է հետևության տվյալ ինստիտուտի կատարելագործման և զարգացման, ինչպես նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի տեսակները որոշակիացնելու, փաստացի հետևանքներ առաջացնող իրավաչափ գործողություններով պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները կարգավորելու անհրաժեշտության վերաբերյալ:

Երրորդ գլխի՝ «Վարչական և դատական կարգով վնասի փոխհատուցման ներպետական կառուցակարգերի հիմնախնդիրները» վերտառությամբ երկրորդ պարագրաֆում հեղինակն ուսումնասիրության առարկա է դարձրել Սահմանադրական դատարանի դիրքորոշումները, ներպետական օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան: Աշխատությունում համակողմանիորեն վերլուծվել են վարչական և դատական կարգով վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավական կառուցակարգերը, վեր են հանվել օրենսդրական կարգավորումներում և իրավակիր պրակտիկայում առկա խնդիրները, կատարվել են առաջարկություններ՝ պետության ստանձնած պարտավորությունների ապահովման և անձանց իրավական պաշտպանության միջոցներն առավել արդյունավետ դարձնելու համատեքստում:

Եզրակացության մեջ ընդգրկված են հետազոտության հիմնական արդյունքներն ու հեղինակի եզրահանգումները, ինչպես նաև օրենսդրական փոփոխությունների առաջարկները:

Ի հավելումն պաշտպանության ներկայացվող դրույթների՝ այդ եզրահանգումներն ու առաջարկներն ամփոփ հանգում են հետևյալին.

1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով օրենսդիրն օգտագործել է «պատասխանատվություն» եզրույթը, մինչդեռ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցումը ոչ թե պատասխա-նատվության, այլ իրավունքի պաշտպանության միջոց է: Հետևապես,

աշխատանքում կարևորվել է Օրենքի 7-րդ բաժնում վնասն ամբողջությամբ որպես պատասխանատվության միջոց չդիտարկելը և տվյալ բաժնի, դրանում զետեղված հոդվածների վերնագրերում և բովանդակությունում օգտագործվող «պատաս-խանատվություն» եզրույթը փոխարինելը:

2. Հանրային իրավունքը կարգավորող օրենսդրությունը չի սահմանում «վնաս» հասկացությունը: Հետևապես այն բացահայտելու համար առաջանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված սահմանումներին դիմելու անհրաժեշտություն այն պարագայում, երբ վերջինս սահմանում է, որ մեկ կողմի՝ մյուսի վարչական կամ այլ իշխանական ենթակայության վրա հիմնված գույքային (ներառյալ հարկային, ֆինանսական ու վարչական) հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությունը և այլ իրավական ակտերը չեն կիրառվում: Հանրային իրավունքի նորմերում «վնաս» հասկացության բացահայտումն ունի կենսական նշանակություն այդ հարաբերություններն այլ հարաբերություններից տարանջատելու, կոնկրետ իրավիճակում վնասի առկայությունը բացահայտելու, ինչպես նաև իրավաչափ վարչարարությամբ հատուցման ենթակա վնասի տեսակներն ըստ անհրաժեշտության կարգավորելու համար:

3. Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում իր խախտված իրավունքները վարչական վարույթի ընթացքում վերականգնելու համար անձի կողմից կատարված ծախսերը, մասնավորապես՝ ներկայացուցչին վճարված գումարի հատուցման հնարավորության նախատեսման անհրաժեշտությունը: Դատական պրակտիկան ընթացել է այն ուղղությամբ, որ տվյալ ծախսերը չեն դասվում վարչական ծախսերի շարքին: Մինչդեռ գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ իրավունքների պաշտպանության համար վճարում կատարվի ներկայացուցչին և վարչական կարգով բողոքարկման արդյունքում բողոքը բավարարվի: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքը չի նախատեսում վարչական մարմինների կողմից ներկայացուցչի վճարի հատուցման, ինչպես նաև նման վճարի ողջամիտ չափ որոշելու վերաբերյալ

կարգավորումներ, հետևապես արդիական է թվում նման կարգավորումների սահմանումը:

4. Մասնագիտական գրականության մեջ գերակշռում է այն մոտեցումը, որ ոչ նյութական վնասի պատճառումը հնարավոր է միայն ֆիզիկական անձանց պարագայում: Նման մոտեցումը բխում է նաև ներպետական օրենսդրությամբ նախատեսված կարգավորումներից, մինչդեռ միջազգային իրավական չափանիշներով ճանաչվել է ոչ նյութական վնասի հատուցման իրավաբանական անձի իրավունքը: Հետևապես, աշխատության մեջ արտահայտվել է կարծիք, որ միջազգային պարտավորությունների պահպանումը ենթադրում է իրավաբանական անձանց բարոյական վնասի հատուցման կառուցակարգեր ներդնելու անհրաժեշտությունը:

5. Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ որոշ իրավաբաններ վնասի հատուցման պահանջ ներկայացնելու համար դիմում են դատական պաշտպանության ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածով նախատեսված ճանաչման հայցի շրջանակներում, մինչդեռ հեղինակի կարծիքով, անկախ այն հանգամանքից, թե ինչ կարգով (վարչական կամ դատական) և ինչ հայցատեսակի շրջանակներում է հաստատվել վարչարարության ոչ իրավաչափ լինելու հանգամանքը, անձը կարող է միջոցներ ձեռնարկել՝ վնասի հատուցումն ստանալու իրավունքն իրացնելու ուղղությամբ: Նշված հարցում անորոշություններից խուսափելու նկատառումներով անհրաժեշտ է թվում նման օրենսդրական ձևակերպման ամրագրումը, ինչը որոշակիորեն կարող է բեռնաթափել դատարանների ծանրաբեռնվածությունը և առավել արդյունավետ դարձնել այդ եղանակով իրավունքների պաշտպանության կառուցակարգերը:

6. Աշխատությունում անդրադարձ է կատարվել մեղքի վերաբերյալ օրենսդրական կարգավորումներին: Այսպես, Օրենքի 98-րդ և 99-րդ հոդվածներում խոսվում է նաև պատասխանատվություն կրողի մեղքի մասին: Մինչդեռ ատենախոսության մեջ փորձ է կատարվել հիմնավորելու, որ վարչական մարմնի պաշտոնատար անձի մեղքի առկայությունը կամ բացակայությունը որևէ նշանակություն չունի ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի

հատուցման հարցը լուծելու համար: Ուստի առաջարկվել է Օրենքի 98-րդ հոդվածի 3-րդ մասում նշված՝ «պատասխանատվություն կրողի մեղքով առաջացած ծախսեր» բառակապակցությունում հանել մեղքի վերաբերյալ նշումը՝ այն վերաձևակերպելով հետևյալ կերպ. «պատասխանատվություն կրողի առաջացրած ծախսեր», իսկ Օրենքի 99-րդ հոդվածի 2-րդ մասում նշված՝ «առաջացել են պատասխանատվություն կրողի մեղքով» բառակապակցությունը փոխարինել «առաջացրել է պատասխանատվություն կրողը» բառերով:

7. Հիմնվելով իրավական որոշակիության սկզբունքի վրա՝ աշխատությունում անդրադարձ է կատարվել նաև վնասի հատուցման եղանակների պատշաճ կարգավորման անհրաժեշտությանը: Մասնավորապես, Օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է հետևանքների վերացման բացառման դեպքերը, մինչդեռ, մեր կարծիքով, նշված դրույթում «հետևանքները վերացնելը» եզրույթի օգտագործումը չի բխում օրենսդրական այլ կարգավորումների բովանդակությունից և անձի՝ խախտված իրավունքների վերականգնման անհրաժեշտությունից: Այսպես. քննարկվող դրույթում օրենսդիրն օգտագործել է «հետևանքները վերացնելը» եզրույթը, իսկ հետևանքի վերացման եղանակներից է նաև համարժեք այլ դրության վերականգնումը, հետևաբար, նախկին դրության վերականգնման անհնարինությունը չի կարող խոչընդոտ լինել համարժեք այլ դրության վերականգնման եղանակով հետևանքի վերացման համար: Ատենախոսությունում արտահայտվել է Օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասում օգտագործված «հետևանքները վերացնելը» բառերը «նախկին դրության վերականգնումը» եզրույթով փոխարինելու վերաբերյալ դիրքորոշում:

8. Օրենքում միևնույն իմաստով օգտագործվել են «անվիճարկելի», «անբողոքարկելի» և «բողոքարկման ոչ ենթակա» եզրույթները: Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով նախատեսված օրենսդրական տեխնիկայի կանոնները՝ առաջարկվում է նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառել միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները:

9. Օրենքի 104-րդ հոդվածով սահմանվել են միայն որոշակի ոչ գույքային իրավունքներ, որոնց վնաս պատճառվելու դեպքում նախատեսվել է դրամական միջոցներով հատուցում կամ առաջացած հետևանքների վերացում: Մասնավորապես, Օրենքով չեն նախատեսվել կրթության իրավունքը, խոսքի, մտքի, խղճի և կրոնի ազատության և այլ հիմնական իրավունքներ, մինչդեռ Սահմանադրության 62-րդ և 81-րդ հոդվածներից, Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումներից հետևում է, որ անձի յուրաքանչյուր իրավունքի սահմանմամբ ոչ միայն պետք է երաշխավորվի դրա իրացումը, պաշտպանությունը, խախտման դեպքում՝ իրավական պատասխանատվության անխուսափելիությունը, այլև իրավունքի խախտման հետևանքով անձի կրած վնասների (այդ թվում՝ բարոյական) հատուցման երաշխավորումը: Նշվածից բխում է նաև Օրենքի 7-րդ բաժնում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին համահունչ կարգավորումներ նախատեսելու անհրաժեշտությունը:

10. Աշխատությունում առաջարկվել է Օրենքով սահմանել այն չափանիշները, որոնք պետք է գնահատվեն ոչ գույքային վնասի՝ դրամական արտահայտությամբ փոխհատուցման ենթակա գումարը հաշվարկելիս, ինչպես նաև փոխարինել Օրենքի 104-րդ հոդվածով նախատեսված «պատճառված ոչ գույքային վնասին համարժեք չափով» բառակապակցությունը, քանի որ ոչ գույքային իրավունքների խախտման հետևանք հանդիսացող վնասը նյութականացված չէ և բացակայում է դրա չափելիությունը:

11. Օրենսդիրը որոշ դեպքերում նախատեսել է վնասի հատուցման նվազագույն և առավելագույն չափեր: Եթե վնասի հատուցման նվազագույն չափի սահմանումը բխում է անձի իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունից, ապա առավելագույն չափի սահմանափակումը որոշ դեպքերում կարող է չապահովել անձի խախտված իրավունքների համարժեք և համաչափ ծավալով վերականգնման հնարավորությունը, քանի որ հատուցման չափը որոշվում է գործի հանգամանքներով և որոշվող վնասի չափի վրա կարող են ազդեցություն ունենալ մի

շարք գործոններ, որոնք կարող են գերազանցել Օրենքով սահմանափակված առավելագույն չափը: Հաշվի առնելով նշված հանգամանքները՝ աշխատությունում նպատակահարմար է համարվել իրավակիրառողներին առավել լայն հայեցողության տրամադրումը՝ օրենքով չսահմանափակելով վնասի հատուցման առավելագույն չափը:

12. Հիմք ընդունելով միջազգային տարբեր երկրների փորձը, ինչպես նաև ՄԻԵԴ դիրքորոշումները՝ աշխատությունում փորձ է արվել հիմնավորելու կյանքի և առողջության իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը, և ոչ թե հատուցումը պայմանավորել այդ իրավունքների նկատմամբ միջամտության արդյունքներով (անձի մահ, աշխատունակության կորուստ և այլն), քանի որ տվյալ իրավունքների նկատմամբ միջամտության արդյունքները կարող են բազմազան լինել և չսահմանափակվել միայն գործող օրենսդրությամբ կանխորոշված հետևանքներով:

13. Օրենսդրությամբ կանոնակարգված չեն փաստացի հետևանքներ առաջացնող իրավաչափ գործողություններով (ռեալ ակտ) պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները: Աշխատությունում կատարվել են եզրահանգումներ, որ անհրաժեշտ է սահմանել նաև իրավաչափ գործողություններով պատճառված վնասի հատուցման կառուցակարգեր, ինչպես նաև կանոնակարգել այն պայմանները, որոնց առկայության դեպքում ենթակա է հատուցման իրավաչափ գործողություններով պատճառված վնասը՝ որոշակիացնելով դրա տեսակները (իրական վնաս, բաց թողնված օգուտ, ոչ նյութական վնաս):

14. Իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ գործող կառուցակարգերն արդյունավետ չեն իրավունքների վերականգնման տեսանկյունից և կարող են հանգեցնել ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման, ուստի առաջարկվել է վնաս պատճառած վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը բողոքարկելու հետ միաժամանակ անձին հնարավորություն ընձեռել ներկայացնելու իրավունքի վերականգնման պահանջ և նման պահանջի առկայության դեպքում այն քննող

մարմնի համար սահմանել վնասի հատուցման վերաբերյալ ակտ կայացնելու լիազորություն:

15. Իրավակիրառ պրակտիկան ընթացել է այն ուղղությամբ, որ վնաս կրած սուբյեկտն է ընտրում վնասի հատուցման եղանակը և հայցում այդ եղանակով վնասը հատուցելու վերաբերյալ վարչական ակտի ընդունումը: Մինչդեռ, կարծում ենք, որ անհրաժեշտ է սահմանել այնպիսի կառուցակարգ, ըստ որի՝ վնաս կրած սուբյեկտին իրավունք կվերապահվի վնասի հատուցման գործը քննող մարմնին ներկայացնել միայն այն հատուցելու պահանջ, իսկ վնասի հատուցման եղանակի որոշման՝ նախկին կամ համարժեք այլ դրության վերականգնման հնարավորության, արդյունավետության, ծախսատարության, դրամական միջոցներով վնասի հատուցման դեպքում դրա չափի որոշման վերաբերյալ հարցերը լուծվեն վնասի հատուցման դիմումը քննող մարմնի կողմից:

Ատենախոսության հավելվածում ներկայացված են օրենսդրական այն փոփոխությունները, որոնք բխեցվել են աշխատությունում կատարված վերլուծություններից:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. «The main issues of domestic structures of damage compensation through administrative and judicial procedure» | Alternative 2025, N 4 (October-December), էջեր 72-83:

2. «Անձի կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցման հայրենական և միջազգային փորձի համեմատական վերլուծություն» | «Դատական իշխանություն», Երևան, 2022, թիվ 10-12 (280-282), էջեր 3-13:

3. «Իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հիմնախնդիրները» | «Օրինականություն», Երևան, 2022, թիվ 132, էջեր 46-52:

4. ««Վնաս» հասկացության որոշ արդի հիմնահարցեր» | «Պետություն և իրավունք», Երևան, 2022, թիվ 2 (93), էջեր 81-89:

5. «Վարչական մարմինների կողմից պատճառված վնասի հատուցումը՝ որպես իրավունքի վերականգման միջոց» | «Դատական իշխանություն», Երևան, 2021, թիվ 11-12 (269-270), էջեր 3-10:

6. «Հետևանքների վերացման պահանջի առանձնահատկությունները վարչական վարույթում և վարչական դատավարությունում» | «Դատական իշխանություն», Երևան, 2021, թիվ 5-6 (263-264), էջ 35-45:

МИКАЕЛ ГАГИКОВИЧ МЕЛКУМЯН
АКТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ КОМПЕНСАЦИИ ВРЕДА, ПРИЧИНЕННОГО АДМИНИСТРИРОВАНИЕМ

Настоящая диссертационная работа на соискание ученой степени кандидата юридических наук посвящена целостному и всестороннему изучению и анализу правовых норм, регулирующих возмещение вреда, причиненный администрированием, а также выявлению различных вопросов, возникающих в ходе получения возмещения вреда, причиненного администрированием и их возможного решения.

Хотя ряд фундаментальных вопросов, касающихся компенсации ущерба, причиненного администрированием, также стали предметом исследований в кандидатских и докторских диссертациях, следует отметить, что институт компенсации ущерба, причиненного а администрированием, недостаточно изучен и регламентирован. Актуальность темы диссертации подтверждается также тем фактом, что правовые нормы, касающиеся компенсации ущерба, причиненного администрированием, неоднократно толковались Кассационным судом и Конституционным судом РА, что обусловило необходимость пересмотра обсуждаемых правовых норм, а также восполнения законодательного пробела в свете выраженных правовых позиций. В данной работе автор ставит перед собой цель всесторонне изучить вопросы теоретического и практического значения, возникающие в процессе компенсации ущерба, причиненного административными правонарушениями, и разработать на их основе и с учетом международной практики предложения, направленные на совершенствование законодательства и правоприменительной практики в РА.

В данной работе автор подробно рассмотрел правовые основы компенсации ущерба, причиненного незаконным администрированием со стороны государственных органов и органов местного самоуправления и их должностных лиц, выявил возможные препятствия для полного восстановления нарушенных прав и предложил решения, направленные на устранение этих препятствий, определил теоретические и практические вопросы, связанные с процедурой компенсации

ущерба, причиненного администрированием, материально-процессуальными аспектами, и предложил варианты их решения.

Автор также рассмотрел особенности компенсации неимущественного ущерба, выявил недостатки в национальном законодательстве, представил обоснование необходимости четкого регулирования института компенсации неимущественного ущерба. Автор также изучил опыт компенсации ущерба, причиненного жизни и здоровью в различных европейских странах, провел сравнительный анализ, выявил особенности ущерба, причиненного законным администрированием, сравнил их с нормами национального законодательства и представил выводы, направленные на совершенствование национального законодательства с целью формирования более эффективных механизмов защиты прав личности.

MIKAYEL GAGIK MELKUMYAN
CURRENT ISSUES OF INJURY COMPENSATION CAUSED BY ADMINISTRATION

This dissertation submitted for degree of candidate of juridical sciences is dedicated to comprehensive study and analysis of legislative regulations, stipulating the compensation for damage caused by administration, as well as to the problems which emerge in the process of obtaining compensation for damage caused by administration and the ways of possible solutions thereof.

Although a number of fundamental issues related to compensation for damage caused by administration have also become the subject of research in some candidate and doctoral theses, however it should be noted that the institution of compensation for damage caused by administration is insufficiently studied and regulated. The relevance of the thesis topic is also indicated by the fact that the legal norms regarding compensation for damage caused by the result of administration have been repeatedly interpreted by the Court of Cassation and the Constitutional Court of RA, which necessitated the revision of the discussed legal norms, as well as filling the legislative gap in light of the expressed legal positions. In this work, the author aims to comprehensively study issues of theoretical and practical importance that arise in the process of compensation for damage caused by administrative violations, and to develop proposals based on them and taking into account international practice, aimed at improving the legislation and law enforcement practice in RA. In this work, the author considered in detail the legal bases of compensation for damage caused by illegal administration by state bodies and local self-government bodies and their officials, identified possible obstacles to the full restoration of violated rights and proposed solutions aimed at eliminating these obstacles, identified theoretical and practical issues related to the procedure for compensation for damage caused by administration, material-procedural aspects, and proposed options for their solutions.

The author also reffered to the features of compensation for non-property damage, identified shortcomings and gaps in the national legislation, presented the rationale for the need for clear regulation of the institution of compensation for non-property damage. The author also studied the experience of compensation for damage caused to life and

health in various European countries, conducted a comparative analysis, identified the features of damage caused by legal administration, compared them with the norms of national legislation and presented conclusions aimed at improving national legislation with the aim of forming more effective mechanisms for the protection of individual rights.